№ 277 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19 № 277

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16. Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն ոեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ"

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՑ 1907 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ռ., տասն ամսվանը՝ 9 ռ., ինն ամսվանը՝ 8 ռ., 8 ամսվանը՝ 7 ռ., եօթ և վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բաղտնայա և Բարօնակայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱԳԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՔՂԱՔԱՑԻՆԵՐ!!

Շուտով կը հրատարակվեն ընտրողների ցուցակները Պետական Դումայի համար։ Ամեն մի անձ, ով ընտրութեան իրաւունք և ցնդ ունի, պէտք է հետաքրքիր լինէ իմանալու համար, արդեօք մտցրված է իր անունը ցուցակների մէջ և եթէ չէ մտցրած, աշխատէ ուղղել տալ սիալը և մտցնել տալ իր անունը, որ չը զրկվի ձայն տալու իրաւունքից պատուիրակների ընտրութեան ժամանակ։ Ցուցակների հրատարակութեան օրից 2 շաբաթ ժամանակամիջոց է տրվում յայտարարութիւն տալու համար, որ սիալն ուղղեն։ ա. օ. մ. 6—10

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1907 Թ.

ԵՐԿՐԻ ՁԱՅՆԸ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ,

որ նուիրվելու է մասնաւորապէս Թիւրքահայկական հարցի լուսաբանութեանը. ծանօթացնելու է իր ընթերցողներին հայ և Թիւրք կեանքի քաղաքական, հասարակական, գրական ու գեղարուեստական զանազան երևոյթների հետ. պէտք է ձգտի հայ-Թիւրքական համերաշխ զործակցութեան

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

	Տարեկան	Վեց ամսուան
Թիֆլիս	3 ռ. 50 կ.	2 ռ. —
Գաւառ	4 ռ. —	2 ռ. 25 կ.
Ամերիկա	2,50 դոլ.	1,50 դոլ.
Արտասահման	13 ֆր.	7 ֆր.

Խմբագրութեան հասցէն՝—Тифлисъ, редакція «Еркри Дэайнъ», Грибоѣдовская, № 16, д. Зубалова, կամ Tiflis, rédaction de l'«Erkri Dzaïn», Griboedovskaya, № 16, maison Zoubaloff.

Թիֆլիսում կարելի է բաժանորդագրվել և «Փոստոնդերից» գրվածառանցում։

ԲԱՑՎԱԾ Է ՆԱՂԴ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 Թ.

ՄԱՐԱԼԱ

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթ

Տարեկան գինը է՝ Թիֆլիսում 4 ռ. Ուրիշ տեղեր՝ 5 ռ.։

Կէս տարվայ	» » 2 ռ.	» » 2 ռ. 50 կ.
3 ամսվայ	» » » 1 ռ.	» » 1 ռ. 25 կ.
1 ամսվայ	» » » — 40 կ.	» » — 50 կ.

«ԽԱՆԹԱԼԱ»-ի տարեկան բաժանորդները 1907 թ-ին, բացի 50 № թերթից Զրի ստանալու են. 1) զունատիպ ՏԱԽՏԱԿ-ՕՐԱՑՈՅՑ, 2) միջադիր խիստ շքեղ պատկեր՝ զանազան գոյներով տպված, 11×8 վերջակ մեծութեամբ, որ ծառայելու է որպէս պատից կախելու ՁԱՐԴ—ՊՍՏԿԵՐ և 3) մի «ԵՐԵԻԹԱԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ», մօտ 200 միջադիր երևոյթներից բաղկացած, ուր մտնելու են եւրոպական և ռուսական նոր երգիծաբանական գրողների լաւագոյն գրուածքներից նմուշներ։

Ընդունում ենք ամեն լեզուներով յայտարարութիւններ։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Хатабала».

Խմբագիր-հրատարակող՝ Ատ. Երիցեան

(ու. կ. հ.) առ. 11—20

Բացվածէ բաժանորդագրութիւն

ՀԱՅԵԼԻ

Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ,

որը երբեմնապէս լոյս կը տեսնի «Հայելիի յաւելուած» անուան տակ։

Տարեկան բաժանորդները կը ստանան՝

1) 50 № «Հայելի»։

2) 12 գեղարուեստական նկարներ, որ տարվայ վերջը առանձին աշխատ կը կազմեն։

3) 2 մեծադիր զունատիպ պատկեր հայկական կեանքից (50×60 սմ.) (Առաջին պատկերը կուղարկվի Զատիկան համարի հետ, իսկ երկրորդը սեպտեմբերի սկզբին)։

4) 1 պատի տախտակ պատկերազարդ Օրացոյց 1908 թ.։

5) 1 յայտնի հայ երգիծաբանների խմբական նկարը։

Բաժանորդագրութեան տարին է նոյեմբերից նոյեմբեր։

Տարեկան գինը պրեմիաներով Թիֆլիսում՝ 4 ռ., դուրսը՝ 5 ռուբ.։ Կէս տարին՝ 2 ռ., դուրսը՝ 2 ռ. 50 կոպ.։ Երեք ամիսը՝ 1 ռ., դուրսը 1 ռ. 25 կ.։ Արտասահման՝ տարեկան 6 ռուբլի, կէս տարին 3 ռուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3. կամ Tiflis, Rédaction du journal «Haeli».

(ա. օ.) Խմբագիր-հրատարակիչ՝ Բ. Ճէպէչեան առ. 2—10

Քաղաքային Սանիտարական-Բժշկական Խորհրդի դիմումը Թիֆլիս քաղաքի ազգաբնակութեանը

Ի նկատի ունենալով, որ Քուլէշ տարափոխիկ հիւանդութիւնը քաղաքում չի նուազում, այլ ընդհակառակը օրէցօր մեծ ծաւալ է ստանում, քաղաքային սանիտարական-բժշկական խորհուրդը հարկաւոր է համարում խորհուրդ տալ ազգաբնակութեանը, իբրև միջոց հիւանդութեան ազատվելու համար, խուսափել ծնդեան տօնածառներ, մանկական երեկոյթներ և նման ուրախութիւններ կազմելուց, որոնք առիթ են դառնում երեխաներին համախմբվել մի տեղում։

Քաղաքային սանիտարական-բժշկական խորհրդի նախագահ՝

Կ. Ն. Ստեփանեան

Քարտուղար՝ Խարազեան

առ. 2—2

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մշտական մահճակալներով

Ելիզավետինսկայա փողոց № 79, տելեֆոն 1026.

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր

ՄԻԹԱՑԵԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ.—11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։

Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ.—11—12 ժ.—ջղային, ներքին հ. և էլեքտրօբուժութիւն։

Գ. Հ. ԹԱԴԵՈՍԵԱՆ.—12—1 ժ. ներքին և երեխայոց հ.

Ի. Ե. ԱՌԵՏԻՍԵԱՆՑ.—12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

Ս. Ա. ԼԻՒՐԻ.—12—1 ժ. քթի, կոկորդի և ականջի հ.

Մ. Պ. ԿԻՄՕՆՑ.—1—2 ժ. վիրաբուժական հ.։

Պ. Ա. ԲԷՅԼԻ.—1—2 ժ. երեխայոց և ներքին հ.։

Ի. Ն. ԹՈՒՄԱՆՕՎ.—5—6 ժ. (երեկոյեան)-կանանց հ. և մանկաբարձութիւն։

Հիւանդանոցում բժշկումն հիպնոզով, կատարվում են միկրոսկոպական, բակտերիոլոգական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ծծմայրների ընտրողութիւն։

Բժշկական խորհուրդի համար վճարը 50 կոպ. Օպերացիաների և համախորհուրդների վճարը ըստ համաձայնութեան։ Դիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմերներից։

(օ. մ.) առ. ե. հ. կ. 3—100

ՄԱՍՆԱԳԵՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ԲՈՒԴԻՆՈՎ.—Ներքին հիւ. հինգշ., կիր 3—4 ժամ.

Բժ. Ֆ. Վ. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ. ուրբ. 2—3 ժ.

Բժ. Մ. Ի. ԵԱՆԶԵՎՍԿԻ.—Ականջի, քթի և բերանի, չորեքշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.։

Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.

Բժ. Ն. Մ. ԱՍԳԻՍՕՎ.—Քթի, բերանի և ականջի, երկ. երեք. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.

Բժ. Վ. Գ. ԲՕԳՕՎՍԿԻ.—Ներքին հիպնոզով ամենայն օր 4—5 ժ.

Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՍՂԵ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.

Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Ներքին, երեխ. երեք., հինգ., շաբ. 4—5 ժ.

Բժ. Ա. Տ. ԲՕՋՄԱՒԻՍԿԻ.—Երեխ., երկ., չորեք. 4—5 ժ., երեք շաբ. 3—4 ժ.։

Բժ. Ն. Ի. ՆԵՒՈՒՄԻՆ.—Աչքի, երկ., երեք., չոր., ուրբ. շաբ., 11—12 ժ.

Բժ. Ա. Ա. ՆՕՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., երեքշ., չորեքշ., ուրբ., շաբ., կիր. 2—3 ժ.։

Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.

Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ
Բժ. Կ. Ի. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ } Կլինիկական անալիզ

Բժ. Գ. Ի. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գինի. մասաժ, երեքշ. 4—6 ժամ.

Մ. Ե. ԳՕՐՕԳՅԵՎԱ.—Մասաժ. 11—4. ժ.

Մ. ԵԱ. ՊԱՒԼՈՅՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.

Բժշկական խորհուրդներ, մասաժ, սրսկիլ, անդամաներ, անալիզի ենթարկել, հիպնոզել, ստնտուների և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան։

առ. (ա. օ.) 27—144

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՍԱՓՐԻԶ"

իւմօր, սատիրիկ-սիմվոլիք

ամսաթերթի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լոյս տեսաւ

V-րդ համարը,

որը և ուղարկվեց բաժանորդներին նաև

„ԱՆԻ"

հրատարակչ. ընկեր. բաց Նամակների I սերիան, 8 հատ, գինն է 60 կոպ.։

Բաժանորդներին ուղարկվեց ձրի իբրև «Սափրիչի» 1 պրէմիան։

Տարեկան բաժանորդագինն է պրէմիայով 2 ռուբլի, իսկ Անդրկասպեան երկրի և արտասահմանի համար 2 ռուբլի 50 կոպ.։

Հասցէ՝ С. П. Б. Казанская 46, 18.

«ՍԱՓՐԻԶ»-ի խմբագրութիւն

և. շ. առ. 19—25

ԲՈՒՓԻՉ ԿԷՖԻՐ

ԲԱԲԱԼՕՎԻ

Վաճառվում է Կովկասի օֆիցերների էկոնոմիական ընկ. մագազիններում և Իւղաշէվի (Երևանեան հրա պարակ) և Ալիխանովի (Վօրոնցովի արձանի դիմաց) քաղցրավաճառանոցներում։

առ. կ. ե. ու. 10—10

Բազմի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը

յանձն է առնում տպագրել՝

1) Անպայման գեղարուեստական արժէք ունեցող հեղինակութիւններ, ինքնուրոյն և թարգմանական։

2) Անպայման գիտական արժէք ունեցող հեղինակութիւններ, հասարակական, պատմական և բնական գիտութիւններին վերաբերեալ։

Թէ ինքնուրոյն և թէ թարգմանական հեղինակութիւնների նիւթը պէտք է լինի մասնաւորապէս հետաքրքրական ժողովրդի լայն խաւերի համար, իսկ լեզուն՝ կանոնաւոր, կոկ և գեղեցիկ։

Հեղինակները և թարգմանիչները կը ստանան վարձ։

Աւելի մանրամասն պայմանները իմանալու համար դիմել՝ Баку, Совѣтъ съѣзда нефтепромышленниковъ, Е. Тагіаносянъ.

(ու. հ.) առ. 3—5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոյն հարցի մասին. Վերջին տեղեկութիւններ. Հնագիտական ընկերութեան ժողովը. կը փոխվի արդեօք ներկայ մինիստրութիւնը. Իրական ռուս մարդիկ նաւատների դերի մէջ. Թատրոն և երաժշտութիւն. Պօլսի հին խանըմներ. Ներկայացուցչական կառավարութիւն Թոփչեանի «Լոյսերը». Նոր Նախիջևանի թեմական դպրոցի շուրջը. Նամակ խմբագրութեան. Ներքինլուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՂՈՒԹԻՒՆ Նամակ Գերմանիայից —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆՈՅՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

I

Մենք ասացինք, որ մեր աշակերտութիւնը պէտք է աչքի առաջ ունենայ, որ նա միայն այն ժամանակ կարող է կեանքի մէջ արդիւնաւէտ գործ կատարել, եթէ նա կը միացնէ իր մէջ երկու յատկութիւն՝ ազնուութիւն իր գործառնութիւնների մէջ և լրջութիւն մտաւոր աշխատանքների մէջ։

Ազնուութիւնը, շիտակութիւնը և բարեխղճութիւնը կազմում են հիմնական այն առանցքը, որոնց շուրջը պէտք է պտտեն մանուկ սերնդի բոլոր մտածողութիւնները, յարաբերութիւնները և գործառնութիւնները։ Ամեն մի շեղումն այդ հիմնական առանցքից պատրաստում է վիհ և խորխորատ, որոնց մէջ շուտ թէ ուշ կը գլորվէ երիտասարդը, թաղելով իրան և շատ անգամ նաև այն գործը, որ նա իր ձեռքն է առել։

Այդ հարցում աւելի լաւ է լինել նոյն իսկ բա՞խ՝ դիր, չափազանց պահանջող, և բացէ ի բաց մերժել «նպատակը արդարացնում է մ ջոցները» վտանգաւոր սկզբունքը, որ առաջ են տանում եղուիտական ոգով առաջնորդվող ղեկավարներ։

II

Երբ որ երիտասարդ մարդը ոգևորված է իր բոլոր էութեամբ, մաքուր է իր զգացմունքների և մտածողութեան մէջ, խուսափում է ամեն մի կեղտիքից և նենգութիւնից, նա իսկապէս մի յոյս է ապագայի համար և նրա մէջ հասարակութիւնը կարող է տեսնել շիտակ և բարեխիղճ գործող։ Իսկ եթէ նրան թելադրել են միայն դիպլոմատի դեր կատարելու և ամեն միջոց ներելի համարելու վերջնական նպատակի համար, այն ժամանակ երիտասարդը սովորում է և ընտելանում մաքուր և անմաքուր միջոցների մէջ խտրութիւն չը դնել խախտում հողի վրա կանգնել և ապագայում շատ գործերի վրա նայել միայն իր անձնական քմահաճոյքների տեսակէտով։

Պատանի անհաղ, զարգացման նախնական քայլերում գտնվող երիտասարդը պէտք է կրթվի միայն և միայն այնպիսի առանցքների մէջ, որոնք պահանջում են անպայման մաքրութիւն և իդեալականութիւն թէ նպատակի և թէ այն միջոցների վերաբերութեամբ, որոնք պէտք է տանեն դէպի այդ նպատակը։

III

Մեր իրականութիւնը առանց այն էլ շատ է փչացած և բարոյական հակացողութիւններն ու մարդկանց գործառնութիւնները շատ են հեռու շիտակութեան և ազնուութեան ցուցումներից։ Իսկ ինչ կը դուրս գայ, եթէ դպրոցն էլ չը կարողանայ պատուաստել պատանուն այն գաղափարը, թէ պէտք է լինել շիտակ գործունէութեան եղանակի մէջ և գործ ունենալ միայն ազնիւ միջոցների հետ։

Մինթէ մենք քիչ ենք տանջվում մեր կեանքում բարոյական քաօսից, կեղծ ու նենգ գործառնութիւններից, որ դեռ նորից ստեղծենք մեզ համար գործողների շարքեր խախուտ բարոյական դրդումներով։

Շիտակութիւնը և ազնուութիւնը պէտք է ճանաչվեն իբրև հիմնական պահանջ մեր աճող ու զարգացող մատաղ սերնդից։

Անպայման։

Եւ երբ ազնիւ ու շիտակ գործողին մենք կը հաղորդենք մատաղ պատրաստութիւն, լուրջ վերաբերմունք դէպի կեանքի երևոյթները և դէպի հասարակական գործունէութիւնը, այն ժամանակ կարող կը լինենք նայել ապագային մտով երիտասարդների վրա, իբրև գրական ոյժերի վրա։

IV

Մեր կեանքի գիտողները գիտեն, որ մեր երիտասարդութեան ամենամեծ պակասութիւնն է մէկը մտաւոր ծուլութիւն է, լուրջ մտաւոր աշխատանքի անընդունակութիւն։

Շատ և շատ ունենք երիտասարդներ, որոնք հարևանցի և մակերևոյթային կերպով կը խօսեն ու կը ճառեն զանազան խնդիրների մասին, բայց անկարող են որևէ լուրջ մտաւոր աշխատանք ներկայացնել, որևէ բարեխիղճ ուսումնասիրութիւն կատարել։

Մարդիկ չեն յոգնում տարիներ շարունակ վայրիվերոյ դատողութիւններ անելուց ամեն բանի մասին, բայց դուք չէք կարող ստիպել, որ նրանք մի քանի ամիս, կամ մի քանի շաբաթ մանրաղնին ուսումնասիրութիւններ կատարեն այս կամ այն խնդրի վերաբերմամբ։

Եւ այդ պատճառով մենք ունենք մեծ թիւով ինտելիգենտ համարվող անձեր, բայց քիչ մտաւոր աշխատաւորներ, գրական և հասարակական մշակներ շատ սահմանափակ թիւով։

Որքան էլ ցաւալի լինի, այդպէս է մեր իրականութիւնը։

V

Անշուշտ դպրոցը չէ կարող մի անգամից տալ մտաւոր մեծ պատրաստութիւն ունեցող մարդիկ. բայց նա կարող է և պարտաւոր է տալ այնպիսի անհատներ, որոնք պատրաստված լինեն քննադատօրէն վերաբերվելու դէպի կեանքի երևոյթները և ընդունակ լինեն մտաւոր լուրջ աշխատանքի։

Իսկ երբ այդ տուած կը լինէք, այն ժամանակ երիտասարդ մարդը շուտով կը դառնայ օգտաւէտ գործող և ժամանակի ընթացքում կը լրացնէ այն, ինչը չէ կարողացել դպրոցը հայթայթել աշակերտական օրերում։

Եւ այդպէս մի կողմից շիտակութիւնն ու ազնուութիւնը բոլոր գործառնութիւնների մէջ, միւս կողմից մտաւոր աշխատանքի ընդունակութիւնը կը նպաստեն ապագայ քաղաքացու և գործողի կազմակերպութեան։

Մեր աշակերտական մատաղ սերունդը պահանջում է, որ դպրոցը իսկապէս նպաստէ նրան դառնալու այդպիսի քաղաքացի և գործող կեանքի մէջ։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Թէհրան, 17 դեկտեմբերի

Շահի առողջութեան դրութիւնը դէպի վատն է գնում։ Գահաժառանգը ընդունեց մէջլիսի կողմից առաքված պատգամաւորութեան, որը յանձնեց շնորհակալական ուղերձը՝ դէպի բարենորոգումները տածած համակրանքի համար։ Ընդամենն գահաժառանգը դիմեց պատգամաւորութեանը մի ճառով, որով գովեց մէջլիսին, որ մի օրում է պետութեան և ժողովրդի միջև, որի վրա յենվում է պետութեան ոյժը և յոյս յայտնեց, որ ժողովրդի բարիքի համար միահամուռ աշխատանք երևան կը գայ։

(«Հեռ. Գործ.»)

—

Թէհրան, 17 դեկտեմբերի

Շահը և գահաժառանգ պրինցը, ստորագրեցին սահմանադրութիւնը, որի մէջ, ի միջի այլոց, խօսվում է սենատի հաստատման մասին, որը բաղկանալու է մասամբ ընտրեալ ներկայացուցիչներից և որով ստորին պալատը հսկողութիւն է ունենալու պետութեան ֆինանսների վրա։ Այդ գահաժառանգ պրինցը ստորագրեց մի առանձին արձանագրութիւն, որով նա պարտաւորվում է չարձակել ներկայ պարլամենտը մինչև երկամեայ ժամանակամիջոցի աւարտումը։

(«Հեռ. Գործ.»)

—

Ստաւրապոլից դեկտեմբերի 17-ին մեզ հեռագրում են

«Ստաւրապոլի Հայոց եկեղեցու ծխականների մի խումբ—Աստրախանի թեմական առաջնորդի թեկնածութեան հավար, խորհրդակցական ժողովում մատնանշեց Խորէն վարդապետ Մուրադբէգեանին, Մխիթար վարդապետ Տէր-Մկրտչեանին, Մաթէոս վարդապետ Մաթէոսեանին և Կարապետ վարդապետ Տէր-Մկրտչեանին։

Գործակալ՝ Եզօրեան քահանայ

—

Բագու, դեկտեմբերի 14-ին

Անցեալ օրը երեկոյեան Ստանիսլաւսկայա փողոցում, մօտ ժամը 8-ին սատիկ հրազարկեր տեղի ունեցան յայտնի չէ թէ ինչ պատճառներից։

Այդ միջոցին մի հայ տղայի խուզարկելով, մտաը գտնում են ատ ճանակ և խլելով նրանից քիչ հեռանում են. երիտասարդը քիչ յետոյ վերադառնում է ընկերների հետ և կամենում է ատրճանակը ներից ատրճանակը առնի, իսկ ոստիկանները, փոխանակ ատ ճանակը վերադարձնելու,—հանդարտ են տալիս և սպանում երկու ընկերներից մէկին, իսկ միւսը փախչում ազատվում է։ Սպանվածի անունը Միկիտա է, Շամախու գաւառի գիւղացի։

Ցով. Ղազանչեան

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԸ

—

Շաբաթ, դեկտեմբերի 16-ին, տեղի ունեցաւ Թիֆլիսի հնագիտական ընկերութեան նիստը։

Նախագահ Լօպատինսկի զեկուցեց, որ ընկերութեան խորհուրդը ուղարկել է շնորհաւորական հեռագիր Վսեվօլոջ Միլլերին նրա գիտական գործունէութեան քսանհինգամեակի առիթով։

Դերժավին կարդաց Միլլերի համառօտ կենսագրութիւնը։ Մոսկվայի գիտնականը կովկասցիներին յայտնի է իր ուսումնասիրութիւններով օսերի մասին։ Իր «Օսական էթիւդներ» հետազօտութեան մէջ նա տալիս է տեղեկութիւններ օսերի լեզուի, առանդութիւնների և պատմութեան մասին։ Միլլերի միւս աշխատութիւնները վերաբերում են մասամբ կովկասին, մասամբ ռուսաց հին քանաւոր վկաների ուսումնասիրութեան։

Ցորեկանի առիթով Միլլերին ուղերձներ են ուղարկվել հիւսիսային Օսետիայից, օսական հրատարակչական ընկերութիւնից, հարաւային Օսետիայից։ Հեռագիր է ուղարկվել կովկասեան ուսումնարանական շրջանից։

Ընդհանուր ժողովը մտքերի մի փոքր փոխանակութիւնից յետոյ, որոշեց միաձայն ընտրել Միլլերին պատուաւոր անդամ և ընդհանուր ժողովի կողմից ուղարկել շնորհաւորութեան հեռագիր։

Տակայշվիի կարդաց մի կարճ զեկուցում պարսկական Իւսուֆ Չիլէյ խանի հեղինակութիւնների վրացական թարգմանութիւնների մասին։ Մինչև այժմ յայտնի են երկու թարգմանութիւն, որոնցից մէկը կատարված է արքայազն Թէյմուրազի ձեռքով։

Դերժավին կարդաց մի ընդարձակ զեկուցում սկիւթացիների մասին։ Հիմնվելով նորագոյն հետազօտութիւնների և զլխաւորապէս Պրագայի գիտնական Նիդերլէի ուսումնասիրութիւնների վրա, զեկուցանողը ներկայացրեց Սկիւթիայի աշխարհագրութիւնը և սկիւթացիների ու նրանց դրացիների ծագումը արիական ու այլ տարրերից։ Զեկուցումը հետաքրքրական էր։

Ընկերութեան հետևեալ նիստը տեղի կունենայ այս ամսի վերջին օրերում։

Ա. Ռ.

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ։

—

Դեկտեմբերի 17-ին գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում նշանակված էր Հայոց Ազգագրական Ընկերութեան ընդհանուր ժողովը, ուր ընկերութեան անդամ Մ. Ցովհաննիսեանը պէտք է դասախօսէր կրօնի զաղափարի, նրա ծագման, և էվոլիւցիայի մասին։

Նշանակված ժամին դահլիճը արդէն լի էր հանդիսականներով, որոնց մեծ մասը բաղկացած էր աշակերտներից։

Ժամի 11 և կէսին դասախօսը սկսեցի իր դասախօսութիւնը, նախապէս յայտնեց, որ նա տալիս է կրօնի ծագման ու էվոլիւցիայի ուրուագիծը միայն, այլ ոչ լուրջ գործ, ուստի անցաւ բուն նիւթին։

Նա բացատրեց, որ կրօնը մի միստիկական զաղափար է, պաշտամունք, հաւատալիք, որ ունեցել է իր ընտրութիւնը և էվոլիւցիան։ Սակայն նրա էութիւնը բացատրելու համար անհրաժեշտ է դիմել հին ժամանակներին, դէպի անանական կեանքը և այնտեղ որոնել կրօնի սաղմային դրութիւնը։ Գիտութիւնը հաստատում է, որ անասունների և մարդկութեան մէջ անդունդ չը կայ, անասուններն էլ ունեն բանականութիւն և բարոյական որոշ ընդունակներ մարդու նման։ Հասարակական կեանքի մէջ ալտրուիզմի բազմաթիւ փայլուն օրինակներ կան, որոնք հաստատում են, որ կրօնը հետևանք է երկիւղի և պատկառանքի զգացմունքի, որ պաշարել է նախամարդուն։ Վայրենիների կեանքի ուսումնասի-

րութիւնից երևում է, որ նախամարդիկ ունեցել են կրօն, թէև ոչ ծիսակատարութիւններ։ Նրանք պաշտել են տիեզերքը, բնութեան տարրերը, զանազան կենդանիներին, առհասարակ այն բոլորին, որոնցից նրանք վախեցել ու պատկառել են։

Կրօնի ամենասկզբնական շրջանը կազմում է անիմիզմը, ոգեպաշտութիւնը կամ նատուրալիզմը (բնապաշտութիւնը), որը կրօնի, հաւատալիքների սկզբնական գաղափարն է և մարդու վայրենական, անասնական շրջանում նրա տրամաբանութեան, հոգեբանութեան հետևանքը։ Նախնական մարդու համար բնութիւնը լի էր զանազան ոգիներով։ Նա պաշտում էր թէ չար և թէ բարի ոգիներին և իւրաքանչիւրի հետ շաղկապում էր իր ըմբռնումները։ Նա հաւատում է բնութեան երևոյթներին, շփոթում է իրականը և երևակայականը իրար հետ ու ստեղծում է առասպելները։

Ապա շօշափելով պաշտամունքները, ծանրացաւ այն մարի վրա, որ վայրենիների աչքում հաւասարվեց է ոչ միայն տիեզերքը, այլ և իր էութիւնը։ Հանդերձեալ աշխարհի հասկացութիւնը այդ հաւատալիքի արմատն է։ Եգիպտական բուրգերը, պիրամիդները Յունաստանի զանազան յուշարձանները հոգու անմահութեան մի նշան են կառուցված։ Այդ փաստերը կապ ունեն սօցիօլօգիայի հետ։ Այդ տեղից է առաջ եկել բանական միապանների ամուսնացային ծագման սկզբունքը։ Մահից յետոյ պաշտվել է ոչ միայն նա, այլ և իր շառաւիղները։

Կրօնը բոլոր հաւատալիքների արմատն է, նա ցեղերի ու ազգերի զանազանումն է։ Մարդիկ հաւատացել են երկրական նոսի յարութեանը։ Այդ հաւատալիքներն են, որ նրանց կախարդների գիրկն են նետել։ Կախարդները քրմական մի դասակարգ էին կազմում և այժմվայ կղերական դասակարգի նախնիքներն են, էվոլիւցիայի ենթարկված։ Նրանց միասին մարդկութեան և Աստուծոյ մէջ բարեխօսութիւնն է։

Կանգ առնելով այն խնդրի վրա, որ կրօնը համաշխարհային մի երևոյթ է, դասախօսը նկատեց, սակայն «թւում է, որ կան անկրօններ ևս», ու յիշեց մի քանի օրինակներ։ Նատուրալիզմի շրջանին յաջորդեց գերբնապաշտութիւնը։ Մարդիկ որքան զարգանում են, այնքան փոխվում է նրանց հաւատալիքների էութիւնը, հանդերձեալ աշխարհի գաղափարը։ Անդրերեզմանական կեանքը սկզբում համարվում էր նեկիայի շարունակութիւն, բայց յետոյ արդէն այդ հանդերձեալ կեանքը նրբանում է և վերանում նրա գաղափարը։

Վսեմի ստուգաբանումը կատարվել է էվոլիւցիայի շնորհիւ, բայց նա միատեսակ տեսակով չէ առաջ գնացել։ Բրամմանականութիւնը իրրև արդիւնք յաջորդել է բուդդայականութիւնը, որ ընդունում է վերացական էութիւնը, բազմաստուածութեան միաստուածութեան գաղափարը։

Միաստուածութիւնը սկզբէն է առել Հրէաստանում։ Միաստուածութեան սաղմը եղել է առաջ Յունաստանում, բայց նա չաճում է Եհովայ Աստուծոյ երևան գալով, որի հանդէպ խոնարհվում են բնութեան տարերքն անգամ։ այդ տեղից է ծագում կրօնական սերերիանութիւնը, անհամբերողութիւնը։ Տիեզերական զարգաւ կրօնը Քրիստոսի ժամանակ որ նոյն Եհովան էր և միայն տարբերվում էր նրանից քրիստոնէութեան գաղափարներով, բարոյական հիմունքներով։ Քրիստոնէութիւնը փոխառութիւն է արել բոլոր կրօնների թէ էսոթերական և թէ տօպամական մասերը։ Նա սահմանեց կղերականութիւնը, եկեղեցին, շեղվեց իր սկզբնական ճանապարհից, բռնապետութիւնը տարածեց և քաղաքական։

Քրիստոնէական կրօնը պարունակում էր իր մէջ և տօպան և էսոթերական բարոյագիտութիւնը «Սիրիր քո մերձաւորին», այդ է քրիստոնէութեան մատուցած մեկ ծառայութիւնը, բայց նա էլ չը կարողացաւ փոխել, և չը նայելով որ նա սկզբում կռիւ էր ժողովրդական հարստութեան ու սեփականութեան դէմ, կոմունիստական ֆազիսի վրա էր հիմնված, սակայն եղբայրութեան և հաւասարութեան քարոզը անարդ մնաց։

Քրիստոնէութեան միաստուած էութիւնը մարդկային յատկանիշներ ունի։ Աստուած նոյն մարդկային էութիւնն է, բայց վատ գաղափարներից զուրկ, վեհացրած։ Թէ առաջ և թէ այժմ կրօնի էութիւնը չէ փոխվել. առաջ էլ, այժմ էլ պաշտվում է մարդկային էութիւնը, հոգին։

Ապա, դասախօսը, շեշտելով, որ Հեգելիզմը կազմակերպվեց մատերիալիստական գաղափարի շնորհիւ (անարխիզմի դէմ), կանգ առաւ Դարվինի, Ֆոխտի և այլոց կարծիքների վրա, որ գիտութիւնը և կրօնը անհաշտ թշնամիներ են իրար հետ, վերջացրեց իր դասախօսութիւնը հետևեալ խօսքերով. «Այսպէս շնորհիւ սօցիալական պայմանների, մարդիկ պարում են արդէն կրօնից։ Սօցիալական հարցը քրիստոնէութեան նման այսօր գալիս, ոտքում է ներկայ ատաղում մարդկութիւնը։ Այդ է ժամանակի կրօնը»։

Ամերիկեցին դասախօսին Արեւելեան, Բալանթար, Բարայեան, Ֆոտակ և ուրիշներ։

Ժամը 2½-ին վերջացաւ ժողովը։

Լ. Դ.

ԿԸ ՓՈԽՎՈՂ ԱՐԴԵՕՔ ՆԵՐԿԱՅ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՆԸ

Վերջին ժամանակներս թէ մայրաքաղաքի թերթերը և թէ կառավարական բարձր շրջանները չափազանց շատ են զբաղված ներկայ մինիստրութեան փոփոխութեան հարցով, ինչպէս առաջին Պեռական Դումայի նախօրեակին եղաւ, այնպէս էլ հիմա ցանկանում են Սոլիպինի մինիստրութիւնը հեռացնել և նրա տեղ նոր մարդկանց նատեցնել։ Այս խնդրի առիթով ամենից շատ գլուխ են յոգնեցնում «խորհրդաւոր» շրջանները, որոնք, ինչպէս երևում է, նատակ հիասթափված են Սոլիպինից, որը, հակառակ իր բոլոր ջանքերի, իր ամբողջ հնարագիտութեան, Դուրնօվոյից ոչ պակաս անկարող եղաւ իր պարծենկոտութիւնն ու իր վրա դրած յոյսերը արդարացնել։ Նա էլ էր խոստացել մի քանի ամսվան մէջ կոտրել միջոցներով երկիրը հանգստացնել, ինչպէս և խոստացել էր, որ երկրորդ Պեռական Դուման անպայման կառավարութեան ուղած մարդկանցից պիտի լինի կազմված։ Սակայն այդ խոստումներից ոչ մէկը և և ոչ միւսը նա կարողացաւ իրագործել, որ երկիրը խաղաղված չէ, այդ իսօ բոլորը գիտեն, իսկ ընտրութիւնների վերաբերեալ հաւաքած տեղեկութիւններից, «բարձրագոյն» շրջանները, ինչպէս երևում է, այն համոզման են եկել, որ այդտեղ էլ Սոլիպինը իր բոլոր սենսատական «բացատրութիւններով», ընտրողական իրաւունքը խոհանոցների ու ախոռների հետ կապելով, զանազան ծուռ և շիտակ «լրացուցիչ» կանոններով շատ բան չէ կարողացել անել, և մեծ հաւանականութիւն կայ, որ երկրորդ Դուման նոյնպիսի «կրօնիկներից» լինի կազմված, ինչպէս և առաջինն էր։

Պրեմիէրից դժգոհ են «շրջաններում» և այն բանի համար, որ նա չը կարողացաւ «իսկական ռուս մարդկանց» միութեան հետ բաւականաչափ համերաշխ ընթանալ և յանախ առիթներ տուեց նրանց բարկութիւնը շարժելու, նամանաւանդ նա շատ անկրօնական գրաւնվեց դէպի իր օգնական Դուրկին, որին մի որևէ «չնչին» գումարի խաթրու անագին կամ դալի ենթարկեց, առանց ուշադրութիւն դարձնելու նոյնիսկ նրա բարձր ազնվական ծագումն ու նրա ունեցած ընդարձակ կապերը բարձրագոյն շրջաններում։

Մի ուրիշ հանգամանք էլ կայ, որ ատիպում է շրջանները մինիստրական կազմը փոխելու հարցը բարձրացնել Պեռական Դումայի նախօրեակին, այդ այն է, որ բոլորովին ցանկալի չէ համարվում, որ ներկայ մինիստրական կազմը իր մեղքերի ամբողջ բագաժով նոր Դումային ներկայանայ, որը գումարվելուն պէս կարող է նրանից հաշիւ պահանջել այն բոլոր զազանութիւնների ու խայտառակութիւնների համար, որ նա կատարել է առաջին Դուման փակելուց դէպը, իսկ եթէ նոր մարդիկ լինեն մինիստրները,—մտածում են «շրջանները»,—բոլորովին այլ պատկեր կը ստացվի. իսօ չի՞ կարելի, յիրաւի, Թաթոսի մեղքերի համար Մաթոսից հաշիւ պահանջել։

Ինչպէս տեսնում էք, բաւականին շատ և զօրաւոր պատճառներ կան Սոլիպինին հեռացնելու համար, և այդ հարցի մէջ, սկզբունքով՝ «շրջաններին» պատկանողները բոլորն էլ կատարելապէս համաձայն են երևում։ Սակայն, դրանից յետոյ անմիջապէս առաջ է գալիս այն հարցը, թէ ո՞ւմ նշանակել նրա տեղը։ Այդտեղ արդէն շրջանները ոչ մի համաձայնութեան չեն կարողանում գալ։ Պրեմիերի պաշտօնի համար ներկայումս երկու աչքի ընկնող թեկնածուներ կան. մէկը հանրածանօթ կոմս Վիտտէն է, իսկ միւսը այժմեան երկրագործութեան մինիստր իշխան Վասիլչիկովն է։ Բարձրագոյն շրջանների մի մասը առաջինի թեկնածութիւնն է պաշտպանում, մեծ յոյս յայտնելով, թէ նա, միմիայն նա կարող է իր մակերեսական ազդեցիկ հնարով դարձեալ բիւրօկրատական փրկել ներկայ դրամական տագնապից։ Իսկ միւս՝ «իսկական ռուս մարդկանց» տեսակէտով դատող մասը Վիտտէի անունն անգամ չէ ուզում լսել, համարելով նրան ամենամեծ «կրամոլնիկը», Ռուսաստանում տեղի ունեցած բոլոր «չարիքների» ամենառաջին աղբիւրն ու պատճառը, որը դաւաճանութեամբ խաթեց թագաւորին ու հոկտեմբերի 17-ի սահմանադրական խոստումները ստորագրել տուեց։

Սրանք իշխան Վասիլչիկովի թեկնածութիւնն են առաջ քշում, պատճառաբանելով, որ նա՝ սա չափազանց սիրված է «իսկական ռուս մարդկանց» կողմից, որոնք ոչ մի ջանք չեն խնայի նրա քաղաքականութիւնը պաշտպանելու համար, և որ երկրորդ՝ իշխանը ազատային խնդիրների վերաբերեալ ամենամուռ մարդն է համարվում շրջաններում։ Թէ ինչ զրպարտութիւններ կան Վասիլչիկովի թեկնածութեան դէմ, այդ մասին մայրաքաղաքի թերթերում մենք գեռ ոչինչ չենք հանդիպել։ Հաւանական է, որ սկզբունքով նրա քաղաքականութեան դէմ ոչ ոք էլ հակառակ չէ «շրջաններում», բայց և նկատի առնելով նախ այն, որ ազգարային հարցի վերաբերեալ իշխանը առանց Դումայի էլ արդէն արել է այն բոլորը, ինչ որ նա կարող էր անել, և ապա՝ որ ամենից գլխաւորն է, ներկայ ժամանակս բիւրօկրատիային ամենանեղ կացութեան մէջ գտնվելը փողի պահանջն է և ոչ թէ ազգարային հարցը։ Փող հարած ժամանակ ամենայն վստահութեամբ կարելի է ցրիւ տալ երկրորդ Դուման էլ, եթէ նա սկսի չը բաւականանալ ազգարային հարցի վերաբերեալ արդէն կատարված «բեհօրմներով», այնինչ փող չեղած դէպքում Դուման կարող է հէնց բիւրօկրատային միանգամից ցրիւ տալ։ Իսկ այդ անիծված փողը գտնելու գաղտնիքը միմիայն ու միմիայն Վիտտէն գիտէ, որը, ինչպէս արդէն կամաց-կամաց յայտնի է դառնում, յաջողել է Ֆրանսիական կառավարութեան կամքի հակառակ ու առանց նրա աջակցութեան, մի քանի յայտնի ֆրանսիական, լեզիական ու գերմանական բանկիրներից խոստումներ ստանալ նոր փոխառութիւն ձեռք բերելու համար և նոյնիսկ այդ գործի մէջ իր եռանդուն աջակցութիւնն է խոստացել ֆրանսիական յայտնի ֆինանսագէտ և նախկին գլխաւոր մինիստր Բուվիէն։

Ինչու՞ վախենալ Վիտտէի կրամօնիկութիւնից, ասում են նրա կողմնակիցները, մինչ նա իր մինիստրութեան օրով բաւականաչափ ապացոյցներ չը տուեց իր բարեմտութեան ու հաւատարմութեան համար։ Ամենաշատը, կարելի է նրան կանխաւ դարձեալ նախազգուշացնել ու պահանջել, որ նա էլի մի քանի արշին դէպի աջ թեքվի...

Բայց մակիր կոմսի հակառակորդները ոչինչ լսել չեն կամենում և, հէնց այն վախից ահարված, որ Սոլիպինի հեռացնելով կարող է խարդախ ազուէսը նրա տեղը գրաւել, վերջին օրերում այլևս Սոլիպինի հեռանալու մասին խօսք չեն բարձրացնում և շատ աւելի լաւ են համարում նրան կրկին իր պաշտօնի մէջ թողնել, քան թէ թոյլ տալ, որ Վիտտէն նորից կառավարութեան դլուխ անցնի։ Այդպիսով Վիտտէի հրապարակ գալու վախի շնորհով Սոլիպինը նոր ու նոր կողմակիցներ է վաստակում թէ բարձրագոյն և թէ սև հարիւրակային շրջաններում։

Անշուշտ, ոչ ոք չը պիտի զարմանայ, եթէ ասենք, որ quasi Բիսմարկի այդ կարգի կողմնակիցների ամենամեծ դարագլուխն է հէնց ինքը Ռուսաստանի անթառամ փուչն ու չար ոգին... Գօրեղօնսպեցելը։

Ա.-Ազատ

«ԻՍԿԱԿԱՆ ՌՈՒՍ ՄԱՐԴԻԿ» ՆԱՒԱՎԱՐՆԵՐԻ ԴԵՐԻ ՄԷՋ

Զափազանց մաղալու, բայց և բնորոշ տեղեկութիւններ ենք իմանում մայրաքաղաքի լրագրներից «իսկական ռուս մարդկանց» գործունէութեան մասին։ Սովորաբար ընդունված է այս մարդկանց միմիայն պօգրօմների մէջ տեսնել, բայց այս անգամ նրանք դուրս են եկել բոլորովին մի այլ, պօգրօմի հետ կապ չունեցող դերի մէջ, սակայն այնպէս էլ վախճանը նորից պօգրօմի նման մի բան է դուրս եկել։

Սև ծովի նաւային ծառայողների գործադուլը ընկճելու համար, «իսկական ռուս մարդկանց» միութիւնը խնդրեց իր շարքերից մարդիկ է հանել, որոնք գործադուլ անողների տեղ պիտի աշխատէին։ Դա, ի հարկէ, շատ հեշտութեամբ է կատարվում և գործադուլի պատճառով նաւահանգիստներում կանգ առած նաւերը սկսում են երթևեկութեան մէջ դնել։ «Իսկական ռուս մարդկանց» Օդեսայի դեկավար կոմս Կոնովնիցինը, սաստիկ ոգևորված այդ հանգամանքից, շտապում է հեռագրել պետերբուրգ իրանց տարած յաղթութեան մասին, որի շնորհով գործադուլ անողները կը խրատվեն և միւս անգամ չեն յանդգնի «իրանց կապրիզներով» ամբողջ նաւագնացութիւնը կանգնեցնել։

Բայց բանից դուրս է գալիս, որ սև հարիւրակային խմբապետ կոմսի ուրախութիւնը չափազանց վաղաժամ է եղել։ «Իսկական ռուս մարդկանց» նաւավարութեան տակ առնված նաւերից երկուսը հասարեա թէ հէնց իսկոյն ծանծաղ տեղ են ընկնում և ուապի վրա նստում։ Մի քանի օրից յետոյ նոյն դրութեան մէջ է ընկնում Զաֆուռնայի մօտ և երրորդ «Կոնոնիով» անունով նաւը։ Զորորդ՝ Պօլիս գնացող նաւի բոլոր սև հարիւրակային ծառայողները ծովային հիւանդութեամբ են բռնվում և հարիւ են կարողանում նաւը տեղ հասցնել, իսկ Պօլիս հասնելուց յետոյ էլ, նրանք անընդունակ են հանդիսանում նաւը դատարկելու համար և մի քանի ծառայողներ բեռների տակ ջարդվում, վիրաւորվում են։ Նաւային ընկերութեան Պօլսի ագենտը տիրված է լինում արձակել այդ բոլոր էժանագին ծառայողներին։

Բայց դրանով չէ վերջանում խնդիրը։ «Русское Общ.» նաւային ընկերութիւնը, չը խրատվելով այդ բոլոր դէպքերից և ոգեորված, թէ մի հրաշալի միջոց է գտել իր ըմբոստ ծառայողների «կամակորութիւնը» ընկճելու համար, նոյն խուլիգանական մարդկանց է յանձնում «Новороссійскъ» նաւը, Սեվաստապոլից Սև ծովեան նաւահանգիստները տանելու համար։ Կառավարութիւնն էլ իր կողմից 700 նորակոչ զինուորներ է յանձնում իր սիրելի բարեկամ «իսկական ռուս մարդկանց» Ռնամի դեկավար կոմս Կոնովնիցինը, սաստիկ ոգևորված այդ հանգամանքից, շտապում է հեռագրել պետերբուրգ իրանց տարած յաղթութեան մասին, որի շնորհով գործադուլ անողները կը խրատվեն և միւս անգամ չեն յանդգնի «իրանց կապրիզներով» ամբողջ նաւագնացութիւնը կանգնեցնել։

Բայց բանից դուրս է գալիս, որ սև հարիւրակային խմբապետ կոմսի ուրախութիւնը չափազանց վաղաժամ է եղել։ «Իսկական ռուս մարդկանց» նաւավարութեան տակ առնված նաւերից երկուսը հասարեա թէ հէնց իսկոյն ծանծաղ տեղ են ընկնում և ուապի վրա նստում։ Մի քանի օրից յետոյ նոյն դրութեան մէջ է ընկնում Զաֆուռնայի մօտ և երրորդ «Կոնոնիով» անունով նաւը։ Զորորդ՝ Պօլիս գնացող նաւի բոլոր սև հարիւրակային ծառայողները ծովային հիւանդութեամբ են բռնվում և հազիւ են կարողանում նաւը տեղ հասցնել, իսկ Պօլիս հասնելուց յետոյ էլ, նրանք անընդունակ են հանդիսանում նաւը դատարկելու համար և մի քանի ծառայողներ բեռների տակ ջարդվում, վիրաւորվում են։ Նաւային ընկերութեան Պօլսի ագենտը տիրված է լինում արձակել այդ բոլոր էժանագին ծառայողներին։

Բայց դրանով չէ վերջանում խնդիրը։ «Русское Общ.» նաւային ընկերութիւնը, չը խրատվելով այդ բոլոր դէպքերից և ոգեորված, թէ մի հրաշալի միջոց է գտել իր ըմբոստ ծառայողների «կամակորութիւնը» ընկճելու համար, նոյն խուլիգանական մարդկանց է յանձնում «Новороссійскъ» նաւը, Սեվաստապոլից Սև ծովեան նաւահանգիստները տանելու համար։ Կառավարութիւնն էլ իր կողմից 700 նորակոչ զինուորներ է յանձնում իր սիրելի բարեկամ «իսկական ռուս մարդկանց» Ռնամի դեկավար կոմս Կոնո

ոչ մի հետևանքի չէ կարելի հասնել այնպիսի օրէնսդրական մերկ շաբլոններով, ինչպիսին Բիտտինգաուզէնն է առաջարկում։

Եթէ այնպիսի մի երկրում, որտեղ գիւղացիութիւնը դեռ շատ ուժեղ է, սեկցիաներին հողաբերութեան հարցը առաջարկվի, այդ պարագայում հարց թէ մեծամասնութիւնը հողերը անպայման ընդհանրական դարձնելու կողմնակից լինի։

Կոլեկտիվ սեփականութեան բարեկամներից շատերն էլ կը ցանկանան, որ հետզհետէ միայն սեփականութիւնը ընդհանրական դարձնվի։

Ոմանք կը ցանկանան, որ հողերի համայնացումը չը տարածվի փոքր հողատէր գիւղացիների սեփականութեան վրա։ Միւսները, դուցէ, կուզենան, որ առայժմ միայն անտառները համայնացվեն, ոմանք էլ—միմիայն ածխանաքները, շատերն էլ, վերջապէս, քաղաքային հողերի համայնացման կողմը կը լինեն, իսկ այս վերջիններից մի քանիսն էլ, կարելի է, անհրաժեշտ կը համարեն միմիայն այն հողերը համայնացնել, որոնց վրա կառուցվածքներ չը կան և այլն։ Իրապէս, հէնց առաջին հարցումը հարիւր տեսակ կօրէնսդիրների կարող է ենթարկվել։ Նոյնը կը լինի և միւս բոլոր հարցումների վերաբերեալ։ Բիտտինգաուզէնը նախօրօք սաստիկ դողում է իր առաջարկած օրէնսդրական եղանակը նրան շատ պարզ և հասկանալի անուանելով։ Նա խառնում է պարզութիւնը շաբլոնականութեան հետ։ Քննենք, օրինակի համար, Հողատէրերին վարձատրելու հարցը։ Բիտտինգաուզէնի ասելով, բոլոր հողատէրերն էլ, ումից որ հողը վերցված կը լինի, պէտք է միատեսակ վարձատրութիւն ստանան։ Նրանցից ամեն մէկը պիտի հողի արժէքի միլիոնդ տոկոսը ստանայ։ Վարձատրութեան այդ եղանակով ամենախոշոր հողատէրերը ամենավերջին գիւղացուն են հաւասարեցվում։ Բացի դրանից, իսկ ինչպէս անել գրաւականով վերցված պարտքի հետ։

Թէ հողատէրերին վարձատրելը և թէ հողի մշակումը պէտք է ամեն տեղ միևնոյն եղանակով կատարվեն, բոլորն էլ համայնքների հաշվին։ Կարծես թէ չէ կարելի մշակման ամենաքաղաքատեսակ եղանակներ գործադրել, կարծես թէ միմեանցից տարբեր մշակման եղանակները չեն կարող, կամ աւելի ճշտ է, չը պէտք է միմեանց հետ կողք կողքի գոյութիւն ունենան։ Մի՞թէ չէին գտնվի այնպիսի քաղաքացիներ, որոնք այն կարծիքի լինէին, թէ լաւ կը լինէր, որ անտառները պետութեանը յանձնվէին անմիջական շահագործութեան համար, թէ ածխանաքները պէտք է որ պետութեան համար մշակվէին բանւորական պրօֆեսիօնալ միութիւնների միջոցով, թէ խոշոր հողաբաժինները հարկաւոր է տալ կապալով խոշոր երկրագործական ընկերութիւններին, իսկ բնակարանների մասին հոգացողութիւնը լաւ կը լինէր համայնքի կամ շրջանի վրա թողնել։ Մի՞թէ մի քանիսը այն կարծիքին չէին լինի, թէ պէտք է որ համայնքներն ու շրջանները առանձնակի տներ լինէին իրանց փոքրիկ պարտէզներով, անգլիական կօտաջների նման, ու դրանց վարձով տային առանձին-առանձին մարդկանց։ Այդ պարագայում կարելի կը լինէր համայնական հողերը շահագործել և մեծ պրօֆեսիօնալ միութիւնների միջոցով, և փոքր ընկերութիւնների միջոցով, և հէնց համայնքի կամ շրջանի ձեռքով, և, վերջապէս, նաև մասնաւոր անձանների ձեռքով։ Իրականութեան մէջ այդ յարաբերութիւնները կարող են դեռ էլի շատ բազմատեսակ լինել։ Իսկ Բիտտինգաուզէնը, այդ բոլոր անսահման բազմատեսակութիւնը միևնոյն նեղ պարկի մէջ խոթելով ու միանգամայն այնանդակելով այն բոլորը, ինչ որ կենսունակութիւն կարող է ունենալ, ասում է, թէ պարզութիւն ու յրդակութիւն է մտցնում օրէնսդրութեան ասպարէզի մէջ։ Մինչդեռ, իրապէս, Բիտտինգաուզէնի առաջարկած անմիջական ժողովրդական օրէնսդրութեան ծրագիրը ոչ-թէ դէպի պարզութիւն կը տանէր, այլ միմիայն դէպի անեղանելի խառնափնթորութիւն։ Օրէնսդրական աշխատանքը մի հատիկ ժողովից տասը հազար ժողովների մէջ տեղափոխելը, ժողովները, որոնք պիտի գործեն միաժամանակ, բայց միմեանցից անկախ,—միմիայն մի հետևանք կունենար, այն է՝ քաոս։

Մենք այստեղ խօսում ենք օրէնսդրական աշխատանքի մի ժողովից տասը հազարի մէջ տեղափոխելու մասին։ Խիստ խօսելով, դա ճիշտ չէ։ Բիտտինգաուզէնը օրէնսդրական ժողովներին օրէնսդրութեան գործողութեան ֆունկցիաներից միմիայն մէկն է տալիս։ Ինչ վերաբերում է միւս ֆունկցիաներին, նա ինքն էլ այնպէս է ենթադրում, որ դրանք կարող են իրագործվել միայն մի հատ ժողովում։ Բայց նա այս վերջին հանգամանքը պարզապէս չէ զգում որովհետև ոչինչ չէ ուզում լսել մի հատիկ օրէնսդրական ժողովի մասին։

Օրէնսդրական գործունէութիւնը միմիայն օրէնքներ քուէարկելու մէջ չէ կայանում։ Եթէ ամբողջ պարլամենտական աշխատանքը միմիայն դրա մէջ կայանար, այն ժամանակ դա մի շատ հեշտ բան կը լինէր։ Բայց օրէնսդրութիւնը ամենից առաջ պէտք է հոգ տանի այն մասին, որ օրէնքի ձևակերպումը համապատասխան լինի իր նպատակին. իսկ երբ օրէնքը ընդունված է, պէտք է հոգ տանել նրան գործադրելու և գործադրութեան եղանակի մասին։

Օրէնքի մշակելը, ինչպէս տեսանք, շատ քիչ է զբաղեցնում Բիտտինգաուզէնին։

«Երբ սեկցիաներում կատարած քուէարկութեան հետևանքը կը պարզվի, այն ժամանակ մինիստրութիւնը, ինչպէս Բիտտինգաուզէնն է ասում իր յօդուածներում, կամ թէ «խմբագրական մասնաժողովը», ինչպէս նա առաջարկում է իր ֆրանսերէն բրօշիւրի մէջ, օրէնքի պարզ և հասկանալի այնպիսի մի տեսակ կը կազմի, որը այն առաւելութիւնը կունենայ, որ անկարելի կը դառնայ նրան զանազան տեսակ բացատրել, ինչպէս այդ տեղի է ունենում մեր պարլամենտներում մշակած օրէնքներից շատերի հետ, որոնք, կարծես, դիտմամբ այնպիսի ոճով են գրված, որպէս զի իրաւաբաններին խրախուսեն երկդիմութիւնների մէջ»։ Բիտտինգաուզէնը մեզ ոչինչ չէ ասում, թէ ինչու հէնց այդ խմբագրական մասնաժողովին այդպիսի աստուածային օրէնութիւն պարգևած պիտի լինի, հակառակ սատանայական պարլամենտների։

Լուի-Բլանը արդէն տուել էր այդ հարցումը ու բացատրել, թէ օրէնքի պարզ ու որոշ ձևակերպութիւնը խմբագրելու համար պէտք է որ խմբագրական մասնաժողովը աւելի ինքնիշխան լինի, քան ընդհանուր ձայնատուութեան օրէնքով ստեղծված մի որևէ պարլամենտ, որովհետև նա միշտ քուէարկութեան քաաոային խանգարիչներու հետ գործ ունի։

Դրան Բիտտինգաուզէնը պատասխանում է որ, եթէ խմբագրական մասնաժողովը համարձակվի պարլամենտական իշխանութիւնը սեփականացնել իրան, ժողովուրդը անմիջականորեն գործերից կը հեռացնի։ Դժուար կացութիւնից կարելի է դուրս գալ և առանց օրէնքի տեսքը ձևակերպելու։

Այս դէպքում, ինչպէս երևում է, նա ենթադրում է, թէ իւրաքանչիւր սեկցիայի ամեն մի նախագահ և բոլոր դէպքերում միևնոյն պարզ հարցումները պիտի ներկայացնի ժողովին։

Եւ վերջապէս օրէնքը գործնականապէս իրագործելու հարցը Բիտտինգաուզէնին բոլորովին դժուար չէ թւում։ Այդ ինքնըստինքեան է կատարվում։ Այսպէս, օրինակ, վերոյիշեալ հողաբերական օրէնքի գործադրութեան մասին նա ասում է. «Հողի գնահատութիւնը պէտք է կատարվի համայնքներում ընտրված կոմիսիաների միջոցով, որոնք հասարակական կօնտրօլի կենթարկվեն։ Պետական այն օրէնսդիրների պատասխանն ու բաց թողնելը, որոնք նշանակված կը լինեն նախկին հողատէրերին զոհացում տալու համար, պէտք է մանրամասն որոշված լինեն վերոգրեալ ձևով ժողովրդից մշակված օրէնքով, ինչ բոլորովին դժուարութիւն չէ ներկայացնում։ Եւ վերջապէս, հողերից օգուտը պէտք է ամեն մի համայնքում կանոնադրված լինի հաստատական սեկցիաների որոշումներով, վերոյիշեալ նոր օրէնքի հիման վրա»։

Շատ ճիշտ է երևակայելը, թէ ինչ ձևով մասնաւոր սեփականատիրութեան օգտին քուէտուած գիւղական համայնքները, իրանց, թէ «կուլտ ժողովրդային» կօնտրօլին ենթարկվող, կոմիսիաների միջոցով պիտի գործադրեն այդ նոր օրէնքը, ենթադրելով հանդերձ թէ այդ օրէնքը շատ պարզ ու որոշ է ձևակերպված։

Կամ, դուցէ, մինիստրութիւնը պէտք է միատեսակութիւն մտցնի համայնքների գործունէութեանց մէջ։ Այդ պարագայում ոմն է յանձնվում մինիստրութեան վրա ունենալիք կօնտրօլը։

Այս հարցումներին մենք նոյնչափ իրաւ տեղը պատասխան պիտի որոնէինք, ինչպէս և այն հարցումին, թէ ով պիտի պետական բիւջէյոր զեկավարի։ Պարլամենտ չը կայ, մինիստրութիւնը նախձեռնութեան իրաւունք չունի. այդպիսով, պետական հասոյթների ու ծախսերի որոշելը իւրաքանչիւր տարվայ համար թողնվում է ժողովրդի միջից պատահական կերպով արված առաջարկութիւններին։

Մենք բոլորովին չենք հասկանում, թէ ինչու Բիտտինգաուզէնը հարկ էր տեսել անարխիզմը հերքելու։

(Կը շարունակվի)

ԹՈՓՋԵՆՆԻ «ԼՈՅՍ»-ԵՐԸ

Երբ մարդ ձանձրոյթը մեղմելու համար թերթում է այս տարագին «Լոյս» օրագրյները, անմիջապէս այն եզրակացութեան է գալիս, որ սրանց կազմողը մի բարեպաշտ լուսաւորչական, մի հաւատացեալ եկեղեցասէր է։ Ահա փաստեր։ Ցունվար 14. «Այսօր երեկոյեան Ազգիս Վեհափառ Հայրապետը իշնում է Մայր Տաճարը եկեղեցական մեծ հանդիսով, անուան տօնախմբութեան առթիւ», հետևեալ օրը, յունվարի 15-ին, կարմիր տառերով. «Երկուշաբթի, Տօն ծննդեան Յովհաննու Կարապետին։ Սուրբ պատարագին կատարում է Հայրապետական մաղթանք բոլոր հայոց եկեղեցիներում։ Անուանակոչութիւն Վեհ. Կաթուղիկոսին ամենայն Հայոց Տեառն Տեառն Մկրտչի Ա.։ Երեկոյեան լուսավառութիւն վեհարանի շուրջը»։ 16-ին յունվարի՝ «Ս. Գեորգոսի հայրապետին, Վլասայ եպիսկոպոսին և Աբիսողոմայ սարկաւագին». և այսպէս շարունակ, ուրիշ, պահք, տօնք, սրբեր, նահատակներ ու եկեղեցական տօներ. աւելին կասենք. գրպանի օրագոյցի կողքին կարդում ենք. «Ըստ բարձու հրամանի Նորին Ս. Օծութեան Վեհափառ Հայրապետի ազգիս՝ Դիւանս թոյլատրէ տպագրութիւն օրագուցիս, վասն 1907 ամի»։ Կարդացէք այնուհետև «Ճրագալոյց Ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Տօն ծննդեան և մկրտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.» այնուհետև ս. Անտոնի, Տրիփոնի, Պարամոյ և Ոնոփրիոսի ճգնաւորացն և այլն, և այլն։

Տեսնում էք ընթերցող, մի բան կարող էք կասկածել, որ սրա կազմողը կամ էջմիածնի մոնթ պիտի լինի և կամ Սեանայ մի անապատական։ Աւաղ, սա այն սպառազիններից մինն է, որ օգոստոսին սասանեցնում էին իրանց ճառերով, կղերի, եկեղեցու և կաթուղիկոսի դէմ խօսելով. այսօր, սակայն, տիրացուի մորթի են հագել և «Տեառն Մկրտչի ու Տեառն մերոյ Յիսուսի» անուով են խօսում ժողովրդի հետ, որովհետև այդպէս յարմար և հեշտ է ժողովրդի զրպանը մտնել 20 կոպէկի համար։ Պարտիօտ, սոցիալիստ և յեղափոխական պարոն. ինչ գործ ունէք սուրբերի, սուրբերի, վեհափառների, պատերի և ուտիքների հետ. կօպէկները, ձեզ համար ամեն բան կարելի է գոհել։

Բացի այս տիրացուական գոհարներից, պ. Թոփչեանը տալիս է և պատմական փաստեր. ահա մի տեսարան Վանի կոտորածից 1896 թ. «կանոնաւոր զօրքը, թիւրք ու քիւրդ բաշիբոզուկը, դիակ դիակի վրա էր թողնում փողոցներում. նա այլևս անկարող լինելով ըստ սովորականին դիակները սայլերով տանել, թողնում ու փախչում էր...» Սխալ չը հասկանաք, ընթերցող. թուրքերն են դիակ թողնողն ու փախչողը... Այդ կուսումն է, որ հերոսացել է մի հայ օրիորդ և աքսորվել է։ Այդ օրիորդին մեր տիրացուի օրագոյցում անուանում են «հայկական Ժաննա դ՝ Արք», որովհետև եղել է «պրօպագանդիստ և զինուոր». ինչ տգիտութիւն պատմական անցքերի և ինչ պրօֆանացիա և թթու ազգասիրութիւն համաշխարհային պատմութեան մէջ եղակի դիւցազնուհու հետ համեմատել մի համեստ հայ հերոսուհի, որ երևի ինքն էլ, եթէ կարդայ, պիտի ամաչի այդ համեմատութիւնից։

Այս կենսագրականը շովէն և ուռուցիկ պերճախօս և կօնկրէտ փաստեր չէն արդարացնում։ Դրանք մի շտեմարան են պիտանի և անպիտան գիտելեաց, ուր բազմաթիւ պիտանի խորհուրդները, խոհանոցի, անային բժշկութեան, արաբատիպ մեքենայի, Դապօն քահանայի, հայ-թուրքական ընդհարումների, ազգական նանելուվների և մրցանակաբաշխութեան, ապակի շինելու արուեստ ու Ռուսաստանի յեղափոխութեան ելևէջները, տապակած ճուտի մասին եղած խորհրդածութիւնների հետ, դրած են կողք կողքի, որոնց մէջ ի հարկէ, ամենից փայլուն տեղը յատկացված է Դաշնակցութեան սիրագործութիւններին։ Անհարիր է այդ ամենն ստուգել և կօնտրօլի ենթարկել. բայց ում սրտումը վերևի բերած փաստերի պատճառով կասկած է ծագել պ. Թոփչեանի բազմաճարպիկ ընոյթի և գրական հաւատարութեան մասին, իրաւունք ունի կասկածելու նա և նրա բերած թեականների և դէպքերի ճշտութեան մասին։ Ահա մի քանի նմուշներ.

«7-ն յունվարի. 2000 զինված թուրքեր, ուղեկից ունենալով Պարպասանոնց անցած քրդական հազար հոգուց բաղկացած հեծելազունդը, (ուրեմն 3000 հոգի) յարձակվեցին Վարազարդն, Նախիջևանիկ և Փիրջամալ հայ գիւղերի վրա, բայց Դաշնակցութեան զինուորները ետ մղեցին յարձակումը»։ Ամեն մի խոհեմ մարդ պիտի կասկածէ այդ թեւերի վրա, որովհետև, հէնց պատի օրագոյցի առաջին երեսում պ. Թոփչեանը մի այսպիսի սխալ տեղեկութիւն է տալիս. «Հիւսխապայլը դարձրեց 1861-ին.» այն ինչ իրօք, նա դարձրել է դրանից ուղիղ 3 տարի ուշ 1865-ին. «24 յունվարի, Յովակիմ Լազարեանցը, ծնված էր Զուգայում 1843-ին»։ Այդ թեականին Յովակիմ Լազարեանը մեռած էր արդէն։ Չեն կարող առարկել, որ դրանք տպագրական սխալներ են, որովհետև օրագոյցի մէջ, որ կազմը վում է յատկապէս մեր միաքը կօնտրօլի ենթարկելու՝ ժամանակի վերաբերեալ հարցերում, սխալներ պիտի չը լինեն։

22 երեսի ետևին թուրքերի մասին հետևեալն է տպած. «Զինցիները նրանց (թուրքերին) պէ-տի,այսինքն արևմտեան շներ էին անուանում»։ Ի՞նչ քաղաքավարի վարմունք մեր հարևանների մասին։

Մենք թերթատել ենք մինչև 24 երեսը, պատի օրագոյցից, և փակում ենք մեր տեսութիւնը, եզրակացութիւնը թողնելով ընթերցողին։

Բ.ունիչ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՈՒՐՋԸ

Նոր-Նախիջևան, 15 դեկտեմբերի

Այսօր բաւական հաստատ աղբիւրներից տեղեկացայ, որ տեղիս գեներալ-նահանգապետը պաշտօնապէս միջամտել է թեմական դպրոցի գործերին։

Սրանից մի քանի ժամանակ առաջ «запрос» է արել թեմականի տեսչի պաշտօնակատարին թէ ինչ է կատարվում դպրոցում և ինչու համար ժամանակին չեն հաղորդել իրան այդ մասին։ Տեսչի պաշտօնակատարը պատասխանել թէ ոչինչ չը կայ «ուշադրութեան արժանի». միայն վարչութիւնը արձակել է 28 աշակերտ, որոնք կարող են ընդունվել, եթէ մինչև ամսոյ 10-ը խնդիր ներկայացնեն վարչութեան։ Գեներալ-նահանգապետը իր դժգոհութիւնն է յայտնել և ասել, թէ իզուր մինչև ամսոյ 10-ն է նշանակված, քանի որ այդ ամենը կարելի էր վերջացնել 3 օրվայ ընթացքում, և աւելացրել է, թէ այն աշակերտները, որոնք մինչև նշանակված օրը վարչութեան ազգին բաւարարութիւն չեն տայ, խսկոյն և եթ էտապով քաղաքից կը հեռացվեն։ և միևնոյն ժամանակ պահանջել է (!) թեմական վարչութիւնից արձակած աշակերտների անուանացուցակը, որն և անյապաղ ստացել է։

Անտարակոյս, եթէ գործերի դրութիւնը միայ այսպէս, մենք շուտով ականատես կը լինենք, թէ ինչպէս մեր թեմականցիներին էտապով իրանց տները կուարկեն։

Անցեալ օրերս գեներալ-նահանգապետը կրկին կանչել էր տեսչի պաշտօնակատարին.

թէ ինչ խօսակցութիւն են ունեցել այդ երկու իմաստունները, առ այժմ յայտնի չէ, բայց փաստը այն է, որ թեմականի աշակերտութեան սպառնում է մի անխուսափելի վտանգ և այս հանգամանքը շատ յուսահատեցնում է նրան։ Առ այժմ արձակված աշակերտների ընդհանուր թիւն է 19—20 հոգի։

Թեմական դպրոցի արձակված աշակերտութեան կրիտիկական դրութիւնը մինչև այժմ չի արժանանում հասարակութեան ուշադրութեան։ Մի՞թէ թղթակցութիւնները և դպրանոցի վարչութեան անարդ լռութիւնը պերճախօս և կօնկրէտ փաստեր չէ՞ն արդարացնում։ Դուրս է գալիս, որ այն չորս աշակերտները, (Դեմիրեան, Համալեան, Բեչեկեան և Օքսենտեան) որոնց խնդիրը բոլորովին մերժեց ընդունել վարչութիւնը, իրբև աշակերտութեան ներկայացուցիչներ, վարչութեան առաջարկութեամբ, բացատրութիւններ էին տուել այն 60 պատուիրակների ժողովին։ Զուտ բիւրօկրատական բրեմъ չէ՞ սա վարչութեան կողմից։

Նոյն

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, դեկտեմբերի

Ի Նպաստ Կովկասի հայ արկածելոց ստացել եմ Նպաստ—«Լուսաւոր» խմբագրութեան միջոցով եղբարք Բրիստափոր, Աղէքսանդր, Միքայէլ և Գրիգոր Բուդաղեանն Նաղարեանների իրանց հանգուցեալ մօր տարելիցի առիթով 50 ր.։ Օլթիի գործակալ Վարդան քահանայի միջոցով 11 ր. 80 կ., (նուիրատուների ցուցակ կը տպագրենք), Նոր-Նախիջևանի բարեգործական ընկերութիւնից 500 ր., ընդամենը հինգ հարիւր վաթսուն և մի բուբլի ութսուն կոպէկ., որ ամբողջապէս յանձնել եմ Վեհափառ Կաթողիկոսի հաստատած կենտրոնական յանձնաժողովի գանձապահ՝ պ. Աղէքսանդր Մելիք-Ազարեանցին։

Այլև ստացել եմ Արմաւիրի Նպաստամատոյց յանձնաժողովի միջոցով պ. Յովսէփ Յովհաննիսեան Զաղուպեանից մի արկղ հագուստ։ Գ. խմբագիր, ի միտութիւն պ. պ. նուիրատուների խնդրում հաճեցէք երկողմս տպագրել «Մշակ»-ի առաջիկայ համարներից մէկում։

Առաջնորդ Թեմին հայոց Վրաստանի և Իմերէթի՝ Գարեգին արքեպիսկոպոս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոցների վերատեսուչը կարգադրել է փակել բոլոր քաղաքային դպրոցները, քուեէշ տարփոխիկ հիւանդութեան պատճառով։

—

Արքունական թատրոնի բեմիսօր Կարգադրեալելին վիրաւորվելից երեք հոգի բռնված են և զինուորական-դաշտային դատարանի են ենթարկված

—

Երևկ, դեկտեմբերի 18-ին Թիֆլիսի գենեռալ-նահանգապետի կարգադրութեամբ դադարեցրին «Тифлисскій Листокъ» և «Знаніе» լրագիրները, վնասակար ուղղութեան պատճառով։

—

Կիրակի, դեկտեմբերի 17-ին, Թիֆլիսում լոյս տեսաւ նոր շաբաթաթերթ «Трудовое Слово» անունով։

—

Զրի մէջ խեղդվողներին ազատող Թիֆլիսի նահանգական ընկերութիւնը որոշել է կառուցել Թիֆլիսում լողարան և ուսումնարան (լողանալ սովորեցնելու համար) քաղաքային ինժեն. Կօշնօվիցկու կազմած նախագծի համաձայն։ Երեկ ընկերութեան վարչութիւնը դիմից քաղաքային վարչութեանը՝ խնդրելով մոցնել 1907 թուի սեպտեմբի մէջ լողարան և յիշեալ ուսումնարան կառուցանելու համար ծախսը։

—

Թիֆլիսի որբերի դատարանի նախագահը մէջտեղը դրել է քաղաքային վարչութեան առաջ, խնդրելով 1907 թ. որբերի դատարանում ծառայողների ռոճիկը 35% աւելացնել։

—

Մամուլի մէջ սխալ լուր երևաց, որպէս թէ Թիֆլիսի առևտրական դպրոցում մտցրել են հայոց պատմութիւն դասը։ Այդ սխալը բերի առաջացել է այն հանգամանքից, որ նոյն դպրոցում, աշակերտների խնդիրքով վեցերորդ դասարաններում հայոց լեզուն աւելացրել են և մէկ դաս հայ գրականութեան պատմութեան։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը խնդրել է Թիֆլիսի նահանգապետին նորից տալ Աճալայում ծառայողներին զէնք կրելու իրաւունք։

—

Դեկտեմբերի 15-ին Թիֆլիս կայարանի պօստային բաժանմունքից մի անյայտ անձ գողացել է մի ջվալ հասարակ թղթակցութիւն, որը պէտք է ուղարկվեր դէպի Բաթում գնացող պօստով։

—

Թիֆլիսի պօստ-հեռագրական ծառայողներին թոյլատրված է տալ առաջիկայ տօներին նպաստ մօտ 2,500 ր. տօնական սեղան պատրաստելու համար։

—

Դեկտեմբերի 14-ին Անտոնովկի փողոցում Փիրալովին սպանելուց յետոյ բանտարկված Գ. Կօբելաշվիլին արձակել են բանտից։

—

Դեկտեմբերի 17-ին երեկոյեան ժամը 7-ին ոսկերիչների շարքում Պոլիցէյսկի փողոցի և Իսիդօրովկի միջանցքի մէջև անյայտ չարագործներ ատրճանակի մի քանի հարուածներով սպանեցին 5-րդ քաղաքամասի 1 թաղի աւագ դռնապան պարսկահպատակ Դաւիթ Աբրահամեանին։ Դիակը ուղարկվել է Միքայէլեան հիւանդանոց։ Ցիշեալ դռնապանի դէմ մահափորձ էր կատարված դեկտ. 13-ին և 14-ին։

—

Դեկտեմբերի 17-ին ցերեկվայ ժամը 3-ին Արշակ Շեխմանցի բնակարանից, (Նիկոլայեվսկի փող. № 96), Շեխմանցի բացակայութեան ժամանակ անյայտ չարագործներ գողացել են զորգեր, փալասներ և զանազան իրեր 150 բուբլու արժողութեամբ։

—

Դեկտեմբերի 15-ին, ցերեկվայ ժամը 4-ին, Արմեանսկի և Կատօլիչեսկի փողոցների անկիւնում անյայտ չարագործներ ատրճանակի հարուածով սպանել են 5-րդ քաղաքամասի օկօլոդոչնի, վերակացու Գր. Բարխին։ Բարխինը քաղաքացու հագուստով է եղել, ձեռքին ձեռնացուպ բռնած, որովհետև մօտ օրերս դուրս է եկել հիւանդանոցից, ուր տարել են նրան հոկտեմբերի 29-ին նրա դէմ կատարված մահափորձից յետոյ, որի ժամանակ Բարխինը վիրաւորվել էր։ Զարագործները կարողացել են փախչել։ Սպանվածի դիակը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոց։

—

Բագում, շաբաթ, դեկտեմբերի 17-ին լոյս տեսաւ թուրքերէն շաբաթաթերթ «Թէքամիլ» անունով։ Շաբաթաթերթը խոստանում է չքաւոր և աշխատաւոր դասակարգերի շահերը պաշտպանել։ Շաբաթաթերթի խմբագիրն է «Кассій» լրագրի աշխատակից Մ. Բ. Հաջինսկին։

—

Ախալցխա քաղաքի հին մասում «Թարաթ» կոչված տեղում երևացել է քութէջ հիւանդութիւնը։

—

Վերջին օրերս Ռուսաստանի զանազան մասերից Պետերբուրգ են գալիս գիւղացիական սուրհանդակներ խմբերով, բողոքելու կալուածատէրերի անարդար գործողութիւնների դէմ, որոնք անկարգութիւնների ամենասաստիկ ժամանակը ամենացածր գներով վաճառել են իրանց հողերը գիւղացիներին, իսկ երբ անկարգութիւնների վտանգը որոշ չափով անցել է արդէն, կալուածատէրերը սկսել են զանազան պատրուակներով յետ առնել վաճառման համար տրված նախնական պայմանները և յայտարարում են վաճառումը չը կայացած։

(«Мол. Жизнь»)

—

«Пет. Газ.» լրագիրը հաղորդում է, որ Պետական Խորհրդի անդամ գեն.-ադ. կոմս Ալէքսէյ Պաւլովիչ Իգնատիէվի եղերական մահը բարձր շրջաններում ճնշող տպաւորութիւն է թողել։ Ազնիւխարտաիվ շրջաններում այդ դէպքին մեծ նշանակութիւն են տալիս։

—

«Пет. Газ.» լրագրին հաղորդում են արժանահաւատ աղբիւրից, որ բարձրագոյն դպրոցների ժամանակաւոր փակումը Պետական Դումայի ընտրութիւնների ժամանակ, սկզբունքով արդէն վճռված է ադմինիստրատիվ շրջաններում։

—

Կլինի գաւառի զեմստվային հիւանդանոցի կառավարիչ կին-բժիշկը հաղորդել է Դումայի վարչութեանը, որ մօտ օրերս, իր բացակայութեան միջոցին, գիշերով հիւանդանոց է մտել ուրեքանիկը՝ սարաժիկների ուղեկցութեամբ և սկսել է խուզարկութիւն կատարել։ Հիւանդանոցում եղած մանկաբարձուհու պահանջին՝ ներկայացնել խուզարկութեան մասին արուած կարգադրութիւնը, ուրեքանիկը հրաժարվել է ցոյց տալ։ Մանկաբարձուհուն՝ խուզարկութեան միջոցին, հեռացրել են առանձին սենեակ։ Սարաժիկները հարբած են եղել և իրանց ներկայութեամբ չափազանց վախեցրել են հիւանդներին։ Հարբած ուրեքանիկը ի միջի այլոց հարցաքննութեան է ենթարկել հիւանդներից մէկին, որի ֆիզիքական դրութիւնը այդ չէր թոյլատրում։ Հիւանդանոցի կառավարչուհին խնդրում է վարչութեանը միջոցներ ձեռք առնել, որպէս զի այսուհետև հիւանդանոցը վերծ մնայ այդպիսի արշաւանքներից։

—

Մօտ օրերս կալանաւորվել է Մոսկվայի հոգևոր սեմինարիայի աշակերտ Այէքսանդր Դրուժինինը, որը «Малый Театръ»-ում ներկայացման ժամանակ ազգային օրհներգը նուագելիս՝ բղաւել է. «Բաւական է։ Մանկավարժական խորհրդի որոշմամբ Դրուժինինը արտաքսված է սեմինարիայի աշակերտութեան թւից։

—

Պետերբուրգի քաղաքապետի հրամանով մայրաքաղաքից արտաքսվում են ուսանողուհիներ Ֆրիդերիկա Շլիպ և Բեգգիդա Շուէյնբէյլը, որոնք իբրև ժողովրդական ազատութեան կուսակցութեան անդամներ, այցելութիւններ էին կատարում ընտրողներին։ («Р. В.)

—

«Б. В.» լրագրին Բոստով-Դօնի վերջից հեռագրում են, որ խաղաղ վերանորոգութեան կուսակցութիւնը ևս հանդիպում է այնպիսի խոչընդոտների, ինչպիսին, որ հանդիպում է սահմանադիր-ռամկավար կուսակցութիւնը իր գործունէութեան մէջ։ Ադմինիստրացիան արգելում է նրանց ժողովները, կոչեր ուղարկելը, հսկողութիւն է նշանակել խաղաղ վերանորոգչականների տների վրա։ Կալանաւորումներն ու խուզարկութիւնները սաստկացել են։ Դեկտեմբերի 10-ին ոստիկանութիւնը ցրել է նախընտրական ժողովը և ներկայ եղողներից երկուսին կալանաւորել է։

—

Մինիստրների կաբինետի առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Լիւբարսկին, յայտնի Լիւբարսկի-Պիսմենոյ որդին, Խարկովից ազնուականութեան խնդիրք է ներկայացրել իրան դուրս հանելու Խարկովի ազնուականութեան ցանկից։ Նա մեղադրում է տեղական ազնուականութեանը այն բանում, որ նա իր ժամանակին պաշտպան չէ կանգնել իր հօրը, որ անմեղ կերպով հալածանքի էր ենթարկվել և զոհ գնացել ինտրիգների, և այն ժամանակ, երբ ազնուականութեան միջից արտաքսվում են լաւագոյն տարրերը, խայտառակութիւն է ազնուական անունը կրել։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

16 դեկտեմբերի

ՕԴԵՍՍԱ, 15 դեկտեմբերի։ «Ռուսաց Նաւագնացութեան ընկերութեան» նաւերը Ղրիմ-կովկասեան գծով ժամանակաւորապէս չեն երթևեկելու երեքշաբթի օրերը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 դեկտեմբերի։ Բանւորական հարցով զբաղվող մասնաժողովի երեկոյեան նիստում վերջացել է բանւորների հիւանդութեան դէպքում, պետական հաշվով ապահովագրելու կանոնների քննութիւնը։ Ընդունված է, որ օրէնքում պէտք է որոշվի տրվելիք նպաստի minumum-ը։ Որևէ ձեռնարկութեան տերը, մասնակցելով բանւորների հետ միասին գանձարկղը կառավարելուն, իրաւունք ունի իր տնօրէնութեան ներքոյ պահել գանձարկղի գումարները։

ՊԱՐԻԶ, 15 դեկտեմբերի։ Սենատը քննում է եկեղեցին պետութիւնից բաժանելու համար կազմած օրինագիծը։ Լակազը յարցնում է, որ օրինագիծը անընդունելի է և բողոքում է եկեղեցական գոյքերը համայնքներին յանձնելու և հոգևորականութեանը առոչիկից զրկելու դէմ։ Զեկուցանող Մակսիմ Լրլիմնը պաշտպանում է օրինագիծը, ասելով, որ ֆրանսիական հանրապետութիւնը բնաւ պապի վասալ դառնալ չէ կարող։ Նախագիծը հարկաւոր է կառավարութեան, իբրև մի զէնք, որով կարելի է կռուել գաղտնի մղվող ընդդիմադրութեան դէմ։ Լամարվէլը առարկում է, որ նախագիծը հակասում է կրօնական սկզբունքներին և որ պապի նուիրական արտաքսելը ապօրինի է։ Կլէմանսօն ընդհատում է հռետորին և ասում է, որ արտաքսման հարցը շուտով կը պարզվի։ Մինիստր Բրիանը, ձախակողմեանների ծափահարութիւնների և աջակողմեանների բողոքներով—մի ճառ է արտասանում և ասում է, որ ֆրանսիական օրէնսդրութիւնը ամենալիբերալն է։ Կառավարութիւնը եկեղեցուն ազատութիւն առաջարկեց, սակայն եկեղեցին հրաժարվեց այդ ազատութիւնից, որպէս չարանենգ թշնամուց։ Եկեղեցին կամենում է, որպէս զի կառավարութիւնը զոհ բերէ իր արժանապատուութիւնը, որը անկարելի է։ Հռոմի հետ բանակցութիւններ չեն վարվի, դրանք աւելորդ են։ Նախագիծը եկեղեցուն կը տայ օրէնքի համապատասխան դրութիւն և կը հարկադրէ պապին, եթէ նա կամենայ ընդդիմադրել, մասնաւոր կերպով ծիսակատարութիւն կազմել, որին ֆրանսիական կաթոլիկները չեն յարվի։ Ձայների մեծամասնութեամբ—183-ով ընդդէմ 86-ի, որոշվում է է գիտութիւն ընդհանուրի ազդարարել մինիստրի ճառը։ Ընդհանուր քննութիւնը ուարված է և յօդուածային քննութիւնը կըսկսվի դեկտ. 16-ին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 դեկտեմբերի։ Պետական Խորհրդի անդամ գեներալ Գրիգէկովը նշանակված է Թուրքեստանի գեներալ-նահանգապետ և զօրքերի հրամանատար, մեկնելով Պետական Խորհրդի անդամ։

ԼՕՆԴՕՆ, 15 դեկտեմբերի։ Ցերեկվայ ժամը 3¼-ին, Աբբրօսից էբէրին գնացող գնացքը Գունից ոչ հեռու էլեկտրական կայարանում անցել է կանգնած գնացքի վրայով։ Շոգեմեքենան շուռ է եկել, սպանվել է մեքենավարը, խորտակվել են վագոնների երեքը, որոնցից լի են եղել ճանապարհորդներով, որոնցից սպանվել են 16-ը, վիրաւորվել՝ 30-ը, շատերը մահացու կ

նը պատերազմում է այսպէս.—Համաձայն Պորտսմուտի դաշնադրութեան (յօդ. 12) Ռուսաստանը և Եապոնիան պարտաւորվեցին աւելորդ նոր պայմանագրի որպէս հիմք ընդունել 1895 թուի ռուս-եապոնական նախկին դաշնագիրը, որը, պատերազմ չեղած դէպքում, պէտք է իր ոյժը պահպանէր դարձեալ հինգ տարի ևս, այսինքն մինչև 1911 թիւը։ Որովհետև առևտրական համաձայնութիւնը, Եապոնական կառավարութեան ցանկութեամբ պէտք է սահմանափակվի նոյն 1911 թուի ժամանակամիջոցով, երբ հէնց վերջանում են Եապոնիայի և օտարազգի մեծ պետութիւնների միջև կապված առևտրական և ճանաչած դաշնագիրները, բնականաբար Ռուսաստանը համաձայն Պորտսմուտեան դաշնադրութեան յիշեալ 12-րդ յօդուածի, իր կողմից Եապոնիային ոչ մի նոր պահանջներ չէ առաջադրել, այլ սոսկ պնդել է բացառապէս այն, որ իրան վերապահվեն մինչև պատերազմը գործող առևտրական դաշնագրով յօգուտ մեր յիշատակած առևտրութիւնները։ Հակառակ սրան, Եապոնիան ոչ միայն ցանկանում է, որ նոր դաշնադրութեան մէջ մուծվին 1895 թուի դաշնագրի մէջ չը յիշված այն բոլոր իրաւունքները, որոնք ապահովված են Ռուսաստանում գտնվող օտարազգիների համար մեր առևտրական նոր դաշնագրերով (1904 և 1906 թ. թ.), այլ և հանդերձ այս ամենի մի քանի բոլորովին նոր պահանջներ է առաջադրում, իր այդ վարմունքը վերագրելով վերջին ժամանակներս Հեռաւոր Արևելքում տեղի ունեցող իրերի փոփոխութիւններին։ Որովհետև նոր դաշնագիրը, երկու կառավարութիւնների համաձայնութեամբ Պորտսմուտում պէտք է 1898 թուի նախկին պայմանագրի նման ամենամեծ բարեացողութեան սկզբունքի վրա հիմնվի, ուրեմն, անկասկած է, որ արգելարիթ երևան չէր գալ, որպէսզի լիակատար փոխադարձ հաւատարմութեան պայմանով—Եապոնիային վերապահվէր այն ընդհանուր արտօնութիւնները, որպիսիներ Ռուսաստանը տալիս է միւս երկրներին։ Դաշնագրի հէնց այս որոշման մշակմանը և նուիրված էին վերջին երեք ամիսների ընթացքում տեղի ունեցող ռուս-եապոնական առևտրական կոնֆերէնցիայի նիստերը։ Այժմ երկու կողմերն էլ համաձայնութեան են եկել, ինչպէս-1895 թուին մի քանից փոխադարձաբար տրված նախկին արտօնութիւնները վերականգնելու, այնպէս և մէկ կամ միւս պետութեան մէջ ապրող երկու ազգերի հպատակներին էլ առևտրի և ծովագնացութեան, անշարժ կայք ձեռք բերելու այնտեղ, ուր այդ թոյլատրված է առհասարակ օտարազգիներին, և տեղական օրէնքների համապատասխան արհեստներով զբաղվելու իրաւունքներ տալու նկատմամբ։

Սակայն դեռ քննվելու են նաև Եապոնիայի նոր առաջադրած այն պահանջները, որ վերաբերում են Սունդարայով ազատ ծովագնացութեանը, (ոչ թէ Ամուրով), որի համար Եապոնիան ոչ մի պահանջ չէ դրել, ապա մեր Հեռաւոր Արևելքում հիւպատոսութիւն հաստատելու և Ասիական Ռուսաստանում ապրող եապոնացիների համար անցաթուղթային դիւրութիւններ ստեղծելու, ինչպէս և մանրաբարձ սահմանագլխում—Եապոնիայի և Ռուսաստանի առևտրական յարաբերութիւնների համար մաքսային մասում առանձին արտօնեալ պայմաններ հաստատելու մասին։ Իսկ ինչ վերաբերում է ձկնորսութեանը, ինչպէս յայտնի է, Պորտսմուտեան դաշնադրութեան 11-րդ յօդուածի համաձայն Ռուսաստանը պարտաւորվում էր Եապոնիայի հետ համաձայնութիւն կապել այն մասով, որ եապոնացիներին իրաւունք տրվի ձկնորսութեամբ պարապել Եապոնական, Օխոտսկեան և Բէհրինգեան ծովերում, ռուսական տիրապետութեան մասերը։ Ռուս կառավարութիւնը լիովին գիտակցելով այդ հարցի ամբողջ կարևորութիւնը, հարցն, որ էապէս վտանգում է Խաղաղ ովկիանոսի մեր ծովափնեայ երկրների տնտեսական զարգացումը և այդ երկրներում ռուսաց ապագայ գաղթավայրութիւնը, հնարաւոր չը գտաւ բանակցութիւններն ուղղելին Եապոնիայի արած առաջարկութիւնները ընդունել, որոնցով, նրա համոզմամբ, եապոնացիներին աւելի ընդարձակ իրաւունքներ էին տրվում, քան նրանք, որպիսիները է նկատի կաը Պորտսմուտեան դաշնադրութեամբ և Պորտսմուտի կոնֆերէնցիայի արձանագրութիւններում։

ՏՈԿԻՕ, 16 դեկտեմբերի։ (Սեփական թղթակից)։ Պարլամենտը բացից կայսրը, Գահական ճառի մէջ ասված է, որ այժմ, մեծ պետութիւնների հետ աւելի բարեկամական յարաբերութիւններով են շաղկապված, քան առաջ։ Կաբինետին հրամայվում է միջոցներ մշակել՝ ամրացնելու ազգային ոյժերը և ընդլայնելու պաշտպանողական միջոցները, այս սկզբունքներով նախահաշիւ կազմել և ներկայացնել պարլամենտին։

ԿԻԵՎ, 16 դեկտեմբերի։ Պատերազմա-դաշտային դատարանը գործում է։

ՇԱՆԽԱՅ, 16 դեկտեմբերի։ Զժելի, Կունկունգի, Լիանգուանի գեներալ-նահանգապետը և Շանտունի նահանգապետը անկարգութիւնները ճնշելու համար լուրջ միջոցներ են ձեռք առել։ Զը նայած, որ ապստամբները եռանդով ընդդիմադրում են, բայց և այնպէս նրանց զօրախմբերը ամբողջապէս շրջապատվում են զօրքերով։ Մանկօուից ստացված տեղեկութիւններին նայած, չինացիները ահագին նշանակութիւն են տալիս Պանգխանգի բայսնում տեղի ունեցած յուզմունքներին, միւս կողմից Պեկինի և Նանկինի պաշտօնական շրջաններում այդտեղի դրութիւնը թէև ոչ սպառնական, գոնէ բաւական լուրջ է համարվում։

18 դեկտեմբերի

ԲԷԼՕՍՏՕԿ, 17 դեկտեմբերի։ Հրէայ ընտրողների մի խումբ մի կոչով հրէայ ընտրողներին առաջարկում է թողնել կուսակցականութիւնը, մասնանշելով, որ անհրաժեշտ է ընտրել մի այնպիսի քրիստոնեայի, որը տեղեակ լինի հրէաների կարիքներին։ Այդպիսի պատուիրակի (выборщикъ) օգնութեամբ կաջողվի մեծացնել հրէայ պատուիրակներին քրիստոնեաների հետ, հակառակ դէպքում, կոչի խօսքերի համաձայն, ոչ մի հրէայ Դուման չէ կարող մտնել։

ՄՕՍԿՎԱ, 17 դեկտեմբերի։ Զինուորական վիճակի զօրահրամանատարը դատարանին է յանձնել պահեստի 7-րդ հեծելազօր գնդի գնդապետներից մէկին, երեք փոխ-գնդապետների և օֆիցէրներից 12-ին և Տամբով քաղաքի զինուորական հրամանատարին և Բօրիսոգլէբսկի պահեստի գումարտակի փոխ-գնդապետներից մէկին, անզգուշութեան և Տամբովում յիշատակած գնդի մէջ ծագած բացարձակ ապստամբութիւնը ճնշելու համար միջոցներ ձեռք չառնելու համար։ Դատարանին են յանձնվում նաև շատ զինուորներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 դեկտ։ Երէկ հոկտեմբերականների ժողովարանում, սահմանադիր-ռամկավար կուսակցութեան լիդէրների մասնակցութեամբ կայացաւ մի ժողով, ուր Միլիւքովը մասնանշեց այն հանգամանքը, որ առաջին Դումայի հանդուրժութիւն և խաղաղութիւն չը մայրից երկրում այն պատճառով, որ նա ոչ թէ օրէնսդրական ժողով էր, այլ սոսկ մի միտինգ։ Նա ռազմիկ էր, ոչ թէ գործունեայ։ Քաղաքական սպանութիւնները դադարեցուց հրաժարվելը խզեց նրա բարոյական կապը ազգաբնակութեան հետ։ Այժմեան մինիստրութիւնը իբրև հակակշիռ նախկին մինիստրութեան, հետամուտ է դրական նպատակի և հնարաւորութիւն է տալիս փոխադարձ հպման դէպ փնտռել առաջիկայ մխահամուռ աշխատանքի մէջ, առանց ոչնչացնելու ազատութիւնը, քննադատութիւնը։ Ընդդիմախօսեցին Բոտչէվը և Միլիւկովը, որոնք, ընդունելով առաջին Դումայի միտինգային բնաւորութիւնը, ասացին, որ առաջին Դուման ցայտուն կերպով արտացոլեց ընտրողների ընդդիմադիր տրամադրութիւնը։

Այդ տրամադրութեան մէջ մեղաւոր են նրանք, որոնք նրանց այդօրինակ դրութեան հասցրին։ Հակառակ տարածված կարծիքի, Դուման մշակեց մի շարք օրինագծեր։

Պօլովցեվը ընդգծեց, որ այժմ վստահութիւնը զէմստվոների կողմն է, որոնք ճանաչեցին թէ սահմանադիր-ռամկավարներին և թէ հոկտեմբերականներին։ Ինչպէս ցոյց տուեցին զէմստվային վերջին ընտրութիւնները, սահմանադիր-ռամկավարները, Վրբօրդում բացարձակօրէն յեղափոխական ասպարէզ նետվելուց յետոյ, քաղում են ուսաց պետականութեան շէնքի պահները։ Հոկտեմբերականները կամենում են ուղղել շինարարների անշորք շինուածքները և վերայնելով անջրպետները, մանել նկուղը և այնտեղ մտցնել գիտութեան լոյսը, խորտակել տարկութեան շղթաները և ազատութիւն շնորհել խաղաղութեան, եղբայրութեան, սիրոյ և պատուաւոր աշխատանքի ազատութեան...

Վլադիմիր Հէսսէնը և Գրէդէսկուլը օրինակ բերելով անգլիական վիգերին, ապացուցեցին պասիվ ընդդիմադրութեան սահմանադրականութիւնը։ Յետագայ հոնտորների ճառերը կրում էին անձնական բնաւորութիւն, որոնց առիթով Պօլովցեվը ասաց, որ նա արհամարհանքով է վերաբերվում դէպի իրան ուղղած լրագրական և բերանացի յարձակումներին, քանի որ այդ բոլորը ըստ էութեան չեն պատասխանում նրա ճառերին, այլ սոսկ ինսինուացիաներ են իր հասցէին։ Այն ցուցմունքները, ասաց նա, թէ ես ծառայում են ներքին գործերի մինիստրութեան մէջ, ես անթոյլատրելի եմ համարում իսկական սահմանադրական կուսակցութեան շրջանակներում, որովհետև իսկական սահմանադիր երկրներում նոյն իսկ մինիստրները խօսում են այն կուսակցութիւնների ժողովներում, որոնց պատկանելու պատիւը ունեն (ծափահարութիւններ)։

Վերջում խօսեց Միլիւքովը և իր ճառը վերջացրեց այս խօսքերով. «Ցաւալի Դուման մեռաւ, ցնորեմ, կեցցէ՛ նոր և կենսունակ Դուման...»։ Ըստ երևոյթին, ժողովականների համակրանքը հոկտեմբերական հոնտորների կողմն էր։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 դեկտեմբերի։ Մենատում քննվում էր «Русь» լրագրի խմբագիր Ա. Ա. Սուվորինի 50,000 ռուբլու պահանջը՝ ներքին գործերի նախկին մինիստր Բուլիգինից։ 1905 թ. յունիսի 8-ին Սուվորինը իր լրագրում գտնելով էր 1905 թ. մայիսի 24-ին Մոսկվայում, զէմստվային և քաղաքային գործիչների համագումարին կազմած ամենապատկեր